Արձանագրություն N 3

<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր 03 դեկտեմբեր 2019թ.

ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Հայրապետյան

անդամներ՝ Ն.Խաչատրյան

Զ.Բաբախանյան

Վ.Հայրապետյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ տնօրեն Բ.Գևորգյան

1. Միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ **<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>>** ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում հրավիրված միաժամանակյա բանակցություններին սահմանված ժամկետում ներկայացել է **<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ տնօրեն Բ.Գևորգյանը: Աննա Սահակյան ԱՁ-ն և <<Միսմա>> ՍՊԸ-ն** էլեկտրոնային եղանակով ներկայացրել են իրենց կազմակերպությունների նոր գնային առաջարկները:

Բանակցությունների արդյունքում **<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ -ի** կողմից **1-ին չափաբաժնի** մասով առաջարկվեց 199000 /մեկ հարյուր իննսունինը հազար/ ՀՀ դրամ, **Աննա Սահակյան ԱՁ-ի կողմից առաջարկվեց 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ, <<Միսմա>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց 209900 /երկու հարյուր ինը հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ:**

<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ի կողմից **2-րդ չափաբաժնի** մասով առաջարկվեց 159000 /մեկ հարյուր հիսունինը հազար/ ՀՀ դրամ, **Աննա Սահակյան ԱՁ-ի կողմից առաջարկվեց 165000 /մեկ հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ, <<Միսմա>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց 159900 /մեկ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ:**

2. <<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>> ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ **<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>>** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել **<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ -ն**՝ որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ **Աննա Սահակյան ԱՁ-ն:** 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել **<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ -ն**՝ որպես ամենացածր գնային առաջարկ

ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ **<<Միսմա>> ՍՊԸ-ն:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. ՀՀ Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ *03.12.2019թ.* հարցում կատարել ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարկելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Գ.Հայրապետյան	
Անդամներ՝ Ն.Խաչատրյան	
Հ.Բաբախանյան	
Վ.Հայրապետյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	
<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ տնօրեն Բ.Գևորգյան	